



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ

ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201

■ /0232/ 3-10-26, 3-52-02



28 Ղեկտեմբերի 2012թ.


ԹԻՎ 382

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ,
ՊԱՐՈՆ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Աշտարակ քաղաքային համայնքի ավագանու 2012թ. ղեկտեմբերի 18, 20-ի նիստերում /արժ. 2/ ընդունված որոշումները:

Առդիր՝ 121 թերթ:

Ա.ԱՆՏՈՆՅԱՆ



ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ



**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն Ե Ր**

/արձանագրություն հմ. 2/

Կայացած՝ 18.20.12.2012թ.

թերթերի թիվը՝ «121»

Ք.ԱՇՏԱՐԱԿ

18.12.2012թ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՐՄՆԻՑ ԴՈՒՐՍ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. Գրիգորյան/


N 1-Ն ՈՐՈՇՈՒՄ


Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ. հոկտեմբերի 10-ի «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատակալից դուրս քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ կատարելու դեպքերը և կարգը սահմանելու մասին» N1283-Ն որոշումն ՔԿԱԳ Աշտարակի ՏԲ պետի առաջարկությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝


Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.


1. ՔԿԱԳ Աշտարակի ՏԲ տարածքից դուրս գրանցվող գրանցվող ամուսնությունների համար սահմանել 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ պետ. տուրք:
2. ՔԿԱԳ Աշտարակի ՏԲ տարածքից դուրս ամուսնության գրանցումները կատարել չաբաթվա բոլոր օրերին մինչև ժամը 20⁰⁰-ն:

Ա Կ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ 

ՏԻԳՈՒՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ 


ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ -կողմ 

ԱՐՄԵՆ ՂԱԼԱՉՅԱՆ -կողմ 


ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒԹՅԱՆ -կողմ 

ԱՐԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ 

ՍՏՅՈՂԱ ՔԱՍՅԱՆ -կողմ 

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ 

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՉՅԱՆ -կողմ 

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -դեմ 

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ 

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ -կողմ 

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ 

ԿԱՐՈ ԳԱՄՊԱՐՅԱՆ -կողմ 

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

18.12.2012թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿՏԻՎՈՐ
ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԿԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ
ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/

N 2-Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/18 և 34/2, «Տեղական տնտրությունների և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել Աշտարակ քաղաքի վարչական տարածքում 2013 թվականի տեղական տնտրությունների ու վճարների հետևյալ դրույքաչափերը /կցվում է հավելված 1/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ -կողմ
ԱՐԱՍ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ
ՍՏՅՈՂԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՋՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ - կողմ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ
ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՐՅԱՆ -կողմ
ԿԱՐՈ ԳԱՍՊԱՐՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	ԴՐՈՒՅՔԱ ԶԱՓԵՐ /դրամ/
1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝	
հիմնական օբյեկտների համար՝	
ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչև 15000 դրամ.	15000
բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝	
բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30000 դրամ.	30000
բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50000 դրամ.	50000
բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 70000 դրամ.	70000
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝	
գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 3000 դրամ.	3000
դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 5000 դրամ.	5000
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 3000 դրամ.	3000
բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույթաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.	
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:	
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ:	5000
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝	
1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 0-ից 17.500 դրամ.	3250
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1.500-ից 17.500 դրամ:	3250
5. Համայնքի տարածքում՝	
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.	350

3250

350

9.9

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական գազի հեղուկացված և արհեստական գազի սեղմված բնական կամ հեղուկացված առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000-200 000 դրամ:	200000
գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000-60 000 դրամ:	30000
5 ¹ . համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:	50000
6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, գվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝	50000
ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000-50 000 դրամ:	50000
բ) հանրային սննդի և գվարճանքի օբյեկտների համար՝ 50 000-100 000 դրամ:	200000
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000-500 000 դրամ:	1000000
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000-1 000 000 դրամ:	250000
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000-500 000 դրամ:	150000
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000-150 000 դրամ:	
7. Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0-5 000 դրամ:	0
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝	
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000-2000 դրամ:	2000
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500-3500 դրամ:	3000
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500-1500 դրամ:	1000
ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:	700
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ:	1000
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ:	10000
ժբ) համայնքի ավագանու կողմից սահմանված՝ համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար: Սույն ենթակետով սահմանված տեղական տուրքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:	
Ընդամենը տուրքեր	

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ		ԴՐՈՒՅՔԱ ՉԱՓԵՐ /դրամ/
Աշտարակ համայնքում կարող են սահմանվել տեղական վճարների հետևյալ տեսակները		15000
ա/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար		5000
բ/ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափազրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար		3000
գ/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար		

Handwritten signature and date: 2011

18.12.2012թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2012Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Տ. Չալարյան/

N 3-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/29 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Աշտարակի քաղաքապետ Ա. Անտոնյանի 25.10.2012թ. թիվ 06-Ա կարգադրությունը և գույքագրման հանձնաժողովի արձանագրությունը, համայնքի ավագանին՝


Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Աշտարակի համայնքային սեփականության 2012թ. գույքագրման փաստաթղթերը /հիմքերը գտնվում են ֆինանսների կանխատեսումների բաժնում/:

ԱՎԱԳԱՆԻ՝

ՆՈՐԻԿ ԱՆԴԵԱՍՅԱՆ -կողմ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՅԱՆ -կողմ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ
ԱՆՂՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ -կողմ
ԱՐՄՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ
ՍՅՈՂԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՊԵՏՅԱՆ -կողմ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՅՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ - կողմ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ
ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ
ԿԱՐՈ ԳԱՄՊԱՐՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ  Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

18.12.2012թ.

**ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ՈՐՈՇԱԿԻ
ԳՈՒՅՔ ՀԱՇՎԵԿՇՈՒՑ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Տ. Չալաբյան/

N 4-Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով Աշտարակի քաղաքապետի 02.11.2009թ. թիվ 233-Ա կարգադրությունը, գույքագրման հանձնաժողովի արձանագրությունը և գույքի առկա վիճակը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/29 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Դուրս գրել Աշտարակի համայնքային սեփականություն համարվող և օգտագործման համար ոչ պիտանի գույքը և կատարել համապատասխան ձևակերպումներ /հիմքերը գտնվում են ֆինանսների և կանխատեսումների բաժնում/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՅԱՆ -կողմ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ -կողմ
ԱՐԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ
ՍՅՈՂԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՊԵՏՅԱՆ -կողմ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ - կողմ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ
ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ
ԿԱՐՈ ԳԱՄՊԱՐՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

18.12.2012թ.

ՀԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԱՄԵՆԱՄՍՅԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2010Թ. ՄԱՐՏԻ 12-Ի N1-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Տ. Զալաբյան/

N 5-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36/2-2 և «Իրավական
ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Զոհված զինծառայող Ռուստամ Կարենի Սիմոնյանի մայր, Լինչի 69 տան
բնակչուհի Ռիմա Սիմոնյանի անունը մտցնել ամենամսյա դրամական
օգնություն ստացողների ցուցակի մեջ, յուրաքանչյուր ամիս նրան վճարելով
15 000 ՀՀ դրամ:

ԱՎԱԳԱՆԻ՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ

ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒԹՅԱՆ -կողմ

ԱՐԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ

ՍՏՅՈՊԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ -կողմ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ - կողմ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ

ԿԱՐՈ ԳԱՄՊԱՐՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱԴԵՏ՝  Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

18.12.2012թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

N 6-Ն ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով համայնքի ավագանու 20.11.2012թ. նիստի Աշտարակի քաղաքապետարանի կառուցվածքը հաստատելու մասին N2-Ն որոշումը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել համայնքի ղեկավարի 13.12.2012թ. N148/1-Ա որոշումը՝ Աշտարակի քաղաքային համայնքի <Աշտարակի կոմունալ ծառայություն> ՀՈԱԿ, Աշտարակի քաղաքային համայնքի <Բարեկարգում> ՀՈԱԿ, Աշտարակի քաղաքային համայնքի <Գերեզմանատների և սգո ծառայությունների> ՀՈԱԿ և Աշտարակի քաղաքային համայնքի <Աղբավայրի սպասարկում> ՀՈԱԿ ստեղծելու մասին:
2. Հաստատել ստեղծված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՅԱՆ -կողմ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ -կողմ
ԱՐԴԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ
ՍՅՈՂԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ
ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ
ԿԱՐՈ ԳԱՍՊԱՐՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ *[Signature]* Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

Աշտարակի քաղաքային համայնքի

«ԱՂԲԱՎԱՅՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀՈԱԿ-Ի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ք. Աշտարակ – 2012թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Աշտարակի քաղաքային համայնքի «Աղբավայրի սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ կազմակերպություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որը ստեղծվել է համայնքի աղբավայրի սպասարկման աշխատանքներն իրականացնելու նպատակով:

Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքներով, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

Կազմակերպության հիմնադիրն է հանդիսանում Աշտարակի քաղաքային համայնքը /այսուհետ հիմնադիր/:

Կազմակերպության կառավարումն իրականացվում է Աշտարակի քաղաքային համայնքի ղեկավարի կողմից /այսուհետ՝ համայնքի ղեկավար/:

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հրապարակ 7:

Կազմակերպությունը՝ որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը իր առունից ծեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտավորություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով և հաստատության հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման միջոցներ:

Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

Կազմակերպության անվանումն է՝

հայերեն՝ լրիվ - Աշտարակի քաղաքային համայնքի «Աղբավայրի սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

կրճատ - Աշտարակի քաղաքային համայնքի «Աղբավայրի սպասարկում» ՀՈԱԿ

Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Աշտարակի քաղաքային համայնքի «Աղբավայրի սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը՝

ա/ սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջներին համապատասխան իրականացնում է կենցաղային և ոչ կենցաղային աղբի տեղադրումն աղբավայրում.

բ/ ապահովում է աղբավայրի զբաղեցրած և հարակից տարածքի սանիտարական վիճակը՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը.

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 3.1. Աշտարակի քաղաքային համայնքի «Աղբավայրի սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը՝ համայնքի ղեկավարը, կազմակերպության տնօրենի միջոցով, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 3.2. Հիմնադիրն իրավունք ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
- 3.3. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
- ա/ կազմակերպության հիմնադրումը,
 - բ/ կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
 - գ/ կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
 - դ/ կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
 - ե/ կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,
 - զ/ կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
 - է/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
- 3.4. Համայնքի ղեկավարը իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:
- 3.5. Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է համայնքի ղեկավարը: Պայմանագրով սահմանվում են

կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթները, որոնք պայմանավորվող կողմերը անհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.6. Աշտարակի քաղաքային համայնքի «Աղբավայրի սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ նրա կողմից լիազորված մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3.7. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3.8. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հիմնարկին, համայնքին կամ պետությանը պատճառված վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

3.9. Աշտարակի քաղաքային համայնքի «Աղբավայրի սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենը՝

ա/ առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,

բ/ ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ/ տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ/ աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում պարգևապահական տույթեր,

ե/ սահմանված կարգով համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, կազմակերպության գործունեության մասին տարեկան հաշվետվությունները,

զ/ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

է/ կազմակերպում է կազմակերպության անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի նախագծային, շինարարական, վերանորոգման և այլ աշխատանքներ

ը/ որոշում է կայացնում կազմակերպության տրանսպորտային միջոցների օգտագործման վերաբերյալ,

թ/ ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր,

ժ/ սահմանում է կազմակերպության հաստիքացուցակը, ֆինանսական-տնտեսական ծրագիրը և ներկայացնում հիմնադրին:

ժա/ հաստատում է կազմակերպության աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և աաշտոնային գրույքաչափերը, ներքին կարգապահական կանոնները,

ժբ/ հաստատում է կազմակերպության գործունեության ներքին փաստաթղթերը,

ժգ/ իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

3.10. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.11. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է կազմակերպության այլ անձ:

3.12. Կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, կազմակերպության առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՆՐԱՆ ԱՄՐԱՅՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Աշտարակի քաղաքային համայնքի «Աղբավայրի սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության և օպերատիվ կառավարման իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից: Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:

- 4.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
- 4.3. Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի, որը օրենքով սահմանված կարգով անցնում է հիմնադիրին:
- 4.4. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
- 4.5. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանը անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով կարող է ամրացվել ցանկացած գույք:
- 4.6. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:
- 4.7. Կազմակերպությունը իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
- 4.8. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:
- 4.9. Հիմնադիրը, հիմնադրի կողմից նախատեսված դեպքում լիազորված մարմինն իրավունք ունի ստուգելու կազմակերպությանն ամրացված գույքի ամբողջականությունն ու պահպանվածությունը՝ դրանց փաստացի առկայության և հաշվառման փաստաթղթերի հետ համեմատության միջոցով:
- 4.10. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները,
- 4.11. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի՝ համայնքի ղեկավարի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

- 5.1. Աշտարակի քաղաքային համայնքի «Աղբավայրի սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել և լուծարվել հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 5.2. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՂՐՈՒՅԹ

- 6.1. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Աշտարակի քաղաքային համայնքի

«ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ք. Աշտարակ – 2012թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ կազմակերպություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որը ստեղծվել է համայնքի տնտեսական գործունեության աշխատանքներն /քաղաքի բարեկարգում, կանաչապատում, փողոցային լուսավորության աշխատանքների իրականացում, բնակարանային տնտեսության սպասարկում և այլն/ իրականացնելու նպատակով:

Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքներով, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

Կազմակերպության հիմնադիրն է հանդիսանում Աշտարակի քաղաքային համայնքը /այսուհետ հիմնադիր/:

Կազմակերպության կառավարումն իրականացվում է Աշտարակի քաղաքային համայնքի ղեկավարի կողմից /այսուհետ՝ համայնքի ղեկավար/:

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հրապարակ 7:

Կազմակերպությունը՝ որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտավորություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և հաստատության հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման միջոցներ:

Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

Կազմակերպության անվանումն է՝

հայերեն՝ լրիվ – Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

կրճատ – Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ

Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՍՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնում է համայնքի տնտեսական գործունեությունը, այդ թվում՝ ա/ կատարում է փողոցների, մայթերի, բակային տարածքների, պուրակների, հուշարձանների տարածքների բարեկարգման, վերականգնման և կանաչապատման աշխատանքները,
- բ/ կազմակերպում է փողոցային լուսավորության աշխատանքների իրականացումն ու սպասարկումը,
- գ/ ապահովում է համայնքի սեփականություն համարվող շենքերի բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկումը, պահպանումն ու շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգման աշխատանքները,
- դ/ կազմակերպում է համայնքի ղեկավարի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պարտադիր պահպանումը, շինության սեփականատերերից գանձում է պահպանման և սպասարկման համար սահմանված պարտադիր վճարները, դիմում է դատարան սեփականատերերի կողմից չվճարված վճարների բռնագանձման համար,
- ե/ օրենքով սահմանված կարգով շենքի ընդհանուր բաժնային սեփականության կամ շինության սեփականատերերի վերաբերյալ տալիս է վիճակագրական հաշվետվություններ,
- զ/ շենքում մահացած անձանց ժառանգների շահերի պաշտպանության նպատակով դիմում է նոտարին՝ ժառանգական գույքի պահպանման համար,
- է/ շինության սեփականատերերին, շենքում բնակվող կամ գործունեություն իրականացնող անձանց կամ շահագրգիռ այլ անձանց տալիս է տեղեկանքներ,
- ը/ կազմում է շինություններին և (կամ) ընդհանուր բաժնային սեփականությանը արտակարգ իրավիճակներից հասցված վնասների վերաբերյալ արձանագրությունները:
- թ/ կազմակերպում է համայնքի բնակիչների հաշվառումը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 3.1. Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը՝ համայնքի ղեկավարը, կազմակերպության տնօրենի միջոցով, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 3.2. Հիմնադիրն իրավունք ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
- 3.3. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա/ կազմակերպության հիմնադրումը,

բ/ կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ/ կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

դ/ կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

ե/ կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

զ/ կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

է/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

3.4. Համայնքի ղեկավարը իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

3.5. Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է համայնքի ղեկավարը: Պայմանագրով սահմանվում են կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթները, որոնք պայմանավորվող կողմերը անհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.6. Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ նրա կողմից լիազորված մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3.7. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3.8. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հիմնարկին, համայնքին կամ պետությանը պատճառված վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

- 3.9. Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենը՝
- ա/ առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,
 - բ/ ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
 - գ/ տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վեժալիազորման իրավունքով լիազորագրեր,
 - դ/ աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
 - ե/ սահմանված կարգով համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, կազմակերպության գործունեության մասին տարեկան հաշվետվությունները,
 - զ/ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
 - է/ կազմակերպում է կազմակերպության անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի նախագծային, շինարարական, վերանորոգման և այլ աշխատանքներ
 - ը/ որոշում է կայացնում կազմակերպության տրանսպորտային միջոցների օգտագործման վերաբերյալ,
 - թ/ ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր,
 - ժ/ սահմանում է կազմակերպության հաստիքացուցակը, ֆինանսական-տնտեսական ծրագիրը և ներկայացնում է հիմնադրին:
 - ժա/ հաստատում է կազմակերպության աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային գրույքաչափերը, ներքին կարգապահական կանոնները,
 - ժբ/ հաստատում է կազմակերպության գործունեության ներքին փաստաթղթերը,
 - ժգ/ իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:
- 3.10. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

- 3.11. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է կազմակերպության այլ անձ:
- 3.12. Կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, կազմակերպության առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1. Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության և օպերատիվ կառավարման իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից: Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:
- 4.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
- 4.3. Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի, որը գրեթե ամբողջությամբ կարգով անցնում է հիմնադիրին:
- 4.4. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
- 4.5. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանը անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով կարող է ամրացվել ցանկացած գույք:
- 4.6. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:
- 4.7. Կազմակերպությունը իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
- 4.8. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:
- 4.9. Հիմնադիրը, հիմնադրի կողմից նախատեսված դեպքում լիազորված մարմինն իրավունք ունի ստուգելու կազմակերպությանն ամրացված գույքի ամբողջականությունն ու

պահպանվածությունը՝ դրանց փաստացի առկայության և հաշվառման փաստաթղթերի հետ համեմատության միջոցով:

4.10. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները,

4.11. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի՝ համայնքի ղեկավարի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ

5.1. Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել և լուծարվել հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

5.2. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտավորությունների պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՂՐՈՒՅԹ

6.1. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Կազմված է 18.12.2012թ.

Բաղկացած է _____ էջից

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Հայաստանի Հանրապետության

Արագածոտն մարզի

Աշտարակ համայնքի ավագանու

« _____ » _____ 20 թ. թիվ _____ որոշմամբ

Աշտարակի քաղաքապետ՝

_____ Ա. Անտոնյան

Տպագրված է ընդամենը _____ օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

ԳՐԱՆՑՎԱԾ է

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՈՇԳԻՍՏՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ

գրանցման թիվ _____

գրանցման օրը _____

վկայական _____

ՀՎՀՀ _____

«ԱՇՏԱՐԱԿԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ՀՈԱԿ-Ի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂՐՈՒՅՑՆԵՐ

Աշտարակի քաղաքային համայնքի «Աշտարակի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ կազմակերպություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որն ստեղծվել է համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքներն /աղբահանություն, սան. մաքրում և այլն/ իրականացնելու նպատակով:

Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքներով, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

Կազմակերպության հիմնադիրն է հանդիսանում Աշտարակի քաղաքային համայնքը /այսուհետ հիմնադիր/:

Կազմակերպության կառավարումն իրականացվում է Աշտարակի քաղաքային համայնքի ղեկավարի կողմից /այսուհետ՝ համայնքի ղեկավար/:

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Ն Աշտարակեցու հրապարակ 7:

Կազմակերպությունը՝ որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտավորություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով և հաստատության հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման միջոցներ:

Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

Կազմակերպության անվանումն է՝

հայերեն՝ լրիվ - Աշտարակի քաղաքային համայնքի «Աշտարակի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

կրճատ - Աշտարակի քաղաքային համայնքի «Աշտարակի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ

Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Աշտարակի քաղաքային համայնքի «Աշտարակի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը՝

ա/ կազմակերպում է համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքը, այդ թվում կենցաղային աղբահանությունը և սան. մաքրման աշխատանքները:

բ/ իրականացնում է Աշտարակ քաղաքի վարչական շրջանի փողոցների, մայթերի, իրապարակների, բակային տարածքների, սիզամարգերի, զբոսայգիների, պուրակների, հուշարձանների և այլ ինժեներական կառույցների ամենօրյա ձեռքի և մեքենայական մաքրման, լվացման, սանիտարական մաքրման ծառայությունները.

գ/ բնակչությունից և իրավաբանական անձանցից գանձում է աղբահանության վարձավճարները և կարող է դիմել դատարան՝ նրանց կողմից չվճարված վարձավճարների շեղանգանձման համար,

դ/ իրականացնում է սպասարկվող տարածքում տեղադրված աղբարկղերում կուտակված աղբի ժամանակին հավաքման, տեղափոխման և շրջակայքի սանիտարական մաքրման աշխատանքները,

ե/ ձմռան ընթացքում ապահովում է փողոցների, մայթերի, զբոսայգիների արահետների և իրապարակների ձյան շերտի մաքրումը, ինչպես նաև դրանց երթևեկելի մասերի սառցածածկույթի վերացումը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Աշտարակի քաղաքային համայնքի «Աշտարակի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը՝ համայնքի ղեկավարը, կազմակերպության տնօրենի միջոցով, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2. Հիմնադիրն իրավունք ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.3. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա/ կազմակերպության հիմնադրումը,

բ/ կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ/ կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

դ/ կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

ե/ կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

զ/ կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

է/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

3.4. Համայնքի ղեկավարը իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

3.5. Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է համայնքի ղեկավարը: Պայմանագրով սահմանվում են կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթները, որոնք պայմանավորվող կողմերը անհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.6. Աշտարակի քաղաքային համայնքի «Աշտարակի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ նրա կողմից լիազորված մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3.7. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3.8. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հիմնարկին, համայնքին կամ պետությանը պատճառված վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

3.9. Աշտարակի քաղաքային համայնքի «Աշտարակի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենը՝

- ա/ արձանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,
- բ/ ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
- գ/ տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վեհալիազորման իրավունքով լիազորագրեր,
- դ/ աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
- ե/ սահմանված կարգով համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, կազմակերպության գործունեության մասին տարեկան հաշվետվությունները,
- զ/ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- է/ կազմակերպում է կազմակերպության անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի նախագծային, շինարարական, վերանորոգման և այլ աշխատանքներ
- ը/ որոշում է կայացնում կազմակերպության տրանսպորտային միջոցների օգտագործման վերաբերյալ,
- թ/ ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր,
- ժ/ սահմանում է կազմակերպության հաստիքացուցակը, ֆինանսական-տնտեսական ծրագիրը և ներկայացնում հիմնադրին:
- ժա/ հաստատում է կազմակերպության աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային գրույքաչափերը, ներքին կարգապահական կանոնները,
- ժբ/ հաստատում է կազմակերպության գործունեության ներքին փաստաթղթերը,
- ժգ/ իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:
- 3.10. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:
- 3.11. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է կազմակերպության այլ անձ:

- 3.12. Կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, կազմակերպության առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՆՐԱՆ ԱՄՐԱՑԿԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1. Աշտարակի քաղաքային համայնքի «Աշտարակի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության և օպերատիվ կառավարման իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից: Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:
- 4.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
- 4.3. Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի, որը օրենքով սահմանված կարգով անցնում է հիմնադիրին:
- 4.4. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
- 4.5. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանը անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով կարող է ամրացվել ցանկացած գույք:
- 4.6. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:
- 4.7. Կազմակերպությունը իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
- 4.8. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:
- 4.9. Հիմնադիրը, հիմնադրի կողմից նախատեսված դեպքում լիազորված մարմինն իրավունք ունի ստուգելու կազմակերպությանն ամրացված գույքի ամբողջականությունն ու պահպանվածությունը՝ դրանց փաստացի առկայության և հաշվառման փաստաթղթերի հետ համեմատության միջոցով:

4.10. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները,

4.11. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի՝ համայնքի ղեկավարի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

5.1. Աշտարակի քաղաքային համայնքի «Աշտարակի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել և լուծարվել հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

5.2. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

6.1. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Կազմված է 18.12.2012թ.

Բաղկացած է _____ էջից

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Հաստատանի Հանրապետության

Արագածոտն մարզի

Աշտարակ համայնքի ավագանու

« _____ » 20 թ. թիվ _____ որոշմամբ

Աշտարակի քաղաքապետ՝

_____ Ա. Անտոնյան

Տպագրված է ընդամենը _____ օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

ԳՐԱՆՑՎԱԾ է

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ

գրանցման թիվ _____

գրանցման օրը _____

վկայական _____

ՀՎՀՀ _____

Աշտարակի քաղաքային համայնքի
«ԳԵՐԵՋՄԱՆԱՏՆԵՐԻ ԵՎ ՍԳՈ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՀՈԱԿ-Ի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Աշտարակի քաղաքային համայնքի «Գերեզմանատների և սգո ծառայությունների» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ կազմակերպություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որը ստեղծվել է համայնքում հուղարկավորության հետ կապված ծառայությունների կազմակերպման, գերեզմանատեղերի տրամադրման ու հաշվառման, գերեզմանատների շահագործման ու պահպանման աշխատանքներն իրականացնելու նպատակով:

Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքներով, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

Կազմակերպության հիմնադիրն է հանդիսանում Աշտարակի քաղաքային համայնքը /այսուհետ հիմնադիր/:

Կազմակերպության կառավարումն իրականացվում է Աշտարակի քաղաքային համայնքի ղեկավարի կողմից /այսուհետ՝ համայնքի ղեկավար/:

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հրապարակ 7:

Կազմակերպությունը՝ որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտավորություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ աատասխանող:

Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով և հաստատության հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման միջոցներ:

Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

Կազմակերպության անվանումն է՝

հայերեն՝ լրիվ – Աշտարակի քաղաքային համայնքի «Գերեզմանատների և սգո ծառայությունների» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

կրճատ – Աշտարակի քաղաքային համայնքի «Գերեզմանատների և սգո ծառայությունների»

ՀՈԱԿ

Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՍՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Աշտարակի քաղաքային համայնքի «Գերեզմանատների և սգո ծառայությունների» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը՝

- ա/ կազմակերպում է գերեզմանատների շահագործումը և դրանց բարեկարգման ու աահպանման աշխատանքները,
- բ/ քաղաքաշինական և բնապահպանական նորմերին համապատասխան տրամադրում է գերեզմանատեղեր,
- գ/ իրականացնում է գերեզմանատեղերի հաշվառումն ու թաղումների գրանցումը,
- դ/ իրականացնում է հուղարկավորությունների կազմակերպման հետ կապված ծառայություններ,
- ե/ սահմանված չափից ավել գերեզմանատեղի տրամադրման դեպքում գանձում և համայնքային բյուջե կատարում է սահմանված կարգի վճարումներ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 3.1. Աշտարակի քաղաքային համայնքի «Գերեզմանատների և սգո ծառայությունների» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը՝ համայնքի ղեկավարը, կազմակերպության տնօրենի միջոցով, որին պաշտոնի նշանակում և աաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 3.2. Հիմնադիրն իրավունք ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
- 3.3. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
 - ա/ կազմակերպության հիմնադրումը,
 - բ/ կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
 - գ/ կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
 - դ/ կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
 - ե/ կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

զ/ կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռի հաստատումը,

է/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

3.4. Համայնքի ղեկավարը իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

3.5. Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է համայնքի ղեկավարը: Պայմանագրով սահմանվում են կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա աշխատանքի վաղձատրման պայմանները, պայմանագրի դադարման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթները, որոնք պայմանավորվող կողմերը անհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.6. Աշտարակի քաղաքային համայնքի «Գերեզմանատների և սգո ծառայությունների» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ նրա կողմից լիազորված մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3.7. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3.8. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հիմնարկին, համայնքին կամ պետությանը պատճառված վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

3.9. Աշտարակի քաղաքային համայնքի «Գերեզմանատների և սգո ծառայությունների» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենը
ա/ առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,

բ/ ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ/ տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ/ աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

ե/ սահմանված կարգով համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, կազմակերպության գործունեության մասին տարեկան հաշվետվությունները,

զ/ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

է/ կազմակերպում է կազմակերպության անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի նախագծային, շինարարական, վերանորոգման և այլ աշխատանքներ

ը/ որոշում է կայացնում կազմակերպության տրանսպորտային միջոցների օգտագործման վերաբերյալ,

թ/ ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր,

ժ/ սահմանում է կազմակերպության հաստիքացուցակը, ֆինանսական-տնտեսական ծրագիրը և ներկայացնում հիմնադրին:

ժա/ հաստատում է կազմակերպության աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային գրույքաչափերը, ներքին կարգապահական կանոնները,

ժբ/ հաստատում է կազմակերպության գործունեության ներքին փաստաթղթերը,

ժգ/ իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ չհակասող այլ լիազորություններ:

3.10. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի ՀՀ օրենսդրությամբ հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.11. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է կազմակերպության այլ անձ:

3.12. Կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, կազմակերպության առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՆՐԱՆ ԱՍՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1. Աշտարակի քաղաքային համայնքի «Գերեզմանատների և սգո ծառայությունների» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության և օպերատիվ կառավարման իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից: Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:
- 4.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
- 4.3. Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի, որը օրենքով սահմանված կարգով անցնում է հիմնադիրին:
- 4.4. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
- 4.5. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանը անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով կարող է ամրացվել ցանկացած գույք:
- 4.6. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:
- 4.7. Կազմակերպությունը իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
- 4.8. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:
- 4.9. Հիմնադիրը, հիմնադրի կողմից նախատեսված դեպքում լիազորված մարմինն իրավունք ունի ստուգելու կազմակերպությանն ամրացված գույքի ամբողջականությունն ու պահպանվածությունը՝ դրանց փաստացի առկայության և հաշվառման փաստաթղթերի հետ համեմատության միջոցով:
- 4.10. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները,

- 4.11. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի՝ համայնքի ղեկավարի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒՇԱՐՈՒՄԸ

- 5.1. Աշտարակի քաղաքային համայնքի «Գերեզմանատների և սգո ծառայությունների» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել և լուծարվել հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 5.2. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

- 6.1. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

18.12.2012թ.

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՆՕՐԵՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

N 7-Ա ՈՐՈՇՈՒՄ

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 15-րդ կետի
պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Պետրոս Ռազմիկի Զոհրաբյանին Աշտարակի քաղաքային համայնքի <Բարեկարգում> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու մասին:
2. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Արա Աշոտի Ղալաչյանին Աշտարակի քաղաքային համայնքի <Աշտարակի կոմունալ ծառայություն> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու մասին:
3. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Լիպարիտ Համլետի Ղալաչյանին Աշտարակի քաղաքային համայնքի <Գերեզմանատների և սգո ծառայությունների> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու մասին:
4. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Եղիշե Թովմասի Թովմասյանին Աշտարակի քաղաքային համայնքի <Աղբավայրի սպասարկում> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու մասին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ -կողմ
ԱՐՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ
ՍՏՅՈՊԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՉՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ
ՍՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ
ԿԱՐՈ ԳԱՍՊԱՐՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

18.12.2012թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ <ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՄԱՐԶԱԴՊԴՐՈՑ> ՀՈԱԿ-ՈՒՄ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

N 8-Ա ՈՐՈՇՈՒՄ

1. Աշտարակի քաղաքապետարանի քաղաքային մանկապատանեկան մարզադպրոցի ծառայություններից օգտվող սաների համար հաստատել ուսման վարձ ամսական 2 000 ՀՀ դրամի չափով:

2. Ի գիտություն ընդունել Աշտարակ համայնքի ավագանու 03.04.2012թ. հմ.17 որոշումը, ըստ որի քաղաքապետարանի կրթամշակութային կազմակերպություններում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարները զիջվում են ցուցակային թվի 15 տոկոսի չափով՝ մանկավարժական խորհրդի որոշմամբ:

ՈՐՈՇՈՒՄԸ ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ

18.12.2012թ.

<ԱՇՏԱՐԱԿ> ՀԱՍՈՒՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. Անտոնյան/

N 9-Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Հիմնադրամների մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 06.12.2012թ. հմ. 141-Ա որոշումը, համայնքի ավագանին՝




Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.



1. Հաստատել՝

ա/ Հիմնադրամ ստեղծելու մասին համայնքի ղեկավարի 06.12.2012թ. հմ. 141-Ա որոշումը,


բ/ <Աշտարակ> համայնքային զարգացման հիմնադրամի կանոնադրությունը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ 
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՅԱՆ -կողմ 
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ -կողմ 
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՉՅԱՆ -կողմ 
ԱՆՔՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ -կողմ 
ԱՐԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ 
ՍՏՅՈՂԱ ՔԱՄՅԱՆ -կողմ 

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ 
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ -կողմ 
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ 
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ 
ՍՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ -կողմ 
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ 
ԿԱՐՈ ԳԱՍՊԱՐՅԱՆ -կողմ 

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  **Ա. ԱՆՏՈՆՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնք
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7, /0232/3-10-26, 3-52-02

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 դեկտեմբերի 2012 թվականի N 141-Ա

<ԱՇՏԱՐԱԿ> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 32/17 և <Հիմնադրամների մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ստեղծել Աշտարակ համայնքի <Աշտարակ> համայնքային զարգացման հիմնադրամ:
2. Գ. Եղիազարյանին.
- Համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել՝

ա/ հիմնադրամ ստեղծելու մասին համայնքի ղեկավարի որոշումը,

բ/ <Աշտարակ> համայնքային զարգացման հիմնադրամի կանոնադրությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ԱՐՄԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ

06.12.2012թ.
ք.Աշտարակ

**«ԱՇՏԱՐԱԿ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ**

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ք. Աշտարակ – 2012թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԱՇՏԱՐԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ /այսուհետ՝ Հիմնադրամ/ հիմնադիրների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է կրթական, գիտական և այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամը հիմնադրվել է 2012թ.դեկտեմբերի 06-ին, Աշտարակ քաղաքային համայնքի ղեկավարի N 141-Ա որոշմամբ և գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգրք/, <Հիմնադրամի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ՝ օրենք/, այլ իրավական ակտերի համաձայն և սույն կանոնադրության հիման վրա:

- Հիմնադրամի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ԱՇՏԱՐԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ռուսերեն լրիվ՝ «АШТАРАК» ФОНД РАЗВИТИЯ ОБЩИНЫ

անգլերեն լրիվ՝ «ASHTARAK» COMMUNITY DEVELOPMENT FUND

1.3. Հիմնադրամի գտնվելու վայրը /փոստային հասցեն/ է՝

378410, ՀՀ ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցու հրապարակ 7:

1.4. Հիմնադրամի հիմնադիրն է՝ Աշտարակ համայնքը

1.5. Հիմնադրամի հնարավոր շահառուներն են՝

- Աշտարակ քաղաքային համայնքի բնակիչները:

1.6. Հիմնադիրը պատասխանատվություն չեն կրում իրենց ստեղծած Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադիրների պարտավորությունների համար:

1.7. Հիմնադրամի պաշտոնական լեզուն է՝ հայերենը:

1.8. Հիմնադրամը պարտավոր է յուրաքանչյուր տարվա ավարտին հաջորդող 6 ամսվա ընթացքում հաշվետվություն հրապարակել իր գործունեության մասին:

1.9. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Հիմնադրամն ունի իր անվանմամբ կլոր կնիք /հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով/, կարող է ունենալ դրոշմներ և բլանկներ, խորհրդանիշ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ ռեկվիզիտներ: Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և /կամ/ արտարժույթով:

1.10. Հիմնադրամն ինքնուրույն է որոշում իր գործունեության ռազմավարական ծրագրերը:

1.11. Հիմնադրամը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.12. Հիմնադրամն իր կանոնադրությանը համապատասխան, սեփականատիրոջ իրավունքով, իրականացնում է իր ունեցվածքի տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը:

1.13. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և նրանից դուրս կարող է ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, որոնք գործում են Հիմնադրամի անունից՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններին համապատասխան:

1.14. Հիմնադրամն իր պարտավորություններով պատասխանատվություն է կրում այն գույքով, որի վրա օրենքով կարող է բռնագանձում տարածվել:

1.15. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.16. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

1.17. Հիմնադրամի գործունեության ժամկետը՝ անժամկետ:

1.18. Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրավունք:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1. Հիմնադրամի հիմնական նպատակներն են.

- Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքի տնտեսական և մշակութային զարգացման օգնության կազմակերպում.
- Նպաստել Աշտարակ քաղաքի արտադրական կարողությունների գիտամեթոդական և նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը:
- Աջակցել առաջնակարգ տեխնոլոգիաների ներդրմանն արտադրության մեջ.
- Աջակցել նոր տնտեսական մտածողության ձևավորման և նոր ծրագրերի կազմակերպմանը.

- Հնարավորության սահմաններում ֆինանսավորել կարևոր նշանակության օբյեկտների շինարարությունը.

- Աջակցել Աշտարակ քաղաքի միջազգային կապերի ինտենսիվ զարգացմանը:

2.2. Հիմնադրամը զբաղվում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով.

- Շինարարական աշխատանքների կատարում.
- Վերանորոգման, բարեկարգման աշխատանքներ:

Հիմնադրամը կարող է իրականացնել օրենքով չարգելված, կանոնադրությամբ սահմանված ցանկացած տնտեսական գործունեություն: Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է Հիմնադրամը և համապատասխանում է այդ նպատակներին:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Հիմնադրամը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Հիմնադրամը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Հիմնադրամը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

2.3. Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար Հիմնադրամը՝

- բարեգործական հիմունքներով ներգրավում է միջոցներ իր կանոնադրական նպատակների իրականացման համար,
- կազմակերպում է գիտական կոնֆերանսներ, սիմպոզիումներ, սեմինարները ընչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,
- ղեկավարում է Հայաստանի Հանրապետության և արտերկրի հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ.
- շահագրգիռ հիմնարկների և կազմակերպությունների միջև կազմակերպում է գիտական փոխանակություններ,
- իրականացնում է հրատարակչական գործունեություն,
- ֆինանսավորելու է փոքր և միջին ձեռնարկության բազմակողմանի զարգացմանը նպաստավոր գիտահետազոտական ծրագրեր.
- կանոնադրական նպատակների իրականացման համար իրականացնում է այլ միջոցառումներ:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Հիմնադրամն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

1. նութապես աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ օրենքով սահմանված կարգով.
2. անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին.
3. հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ.
4. օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել կանոնադրության փոփոխություններ.
5. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.
6. ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ /մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/ և հիմնարկներ.
7. ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից.
8. ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքել պայմանագրեր,
9. իրականացնել գիտական հետազոտություններ և ծրագրերի մշակումներ.
10. աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից առաջարկված մշակութային, կրթական, գիտական բնույթի նախաձեռնությունների իրականացմանը.
11. իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

3.2. Հիմնադրամը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:

3.3. Հիմնադրամը պարտավոր է՝

1. գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքին և այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.
2. օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.
3. օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ.
4. իրականացնել օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ պարտականություններ:

3.4. Սույն կանոնադրության 5.4.-րդ կետի <ա> և <բ> ենթակետերով նախատեսված անձանց, ինչպես նաև իրավասու պետական մարմինների պահանջով Հիմնադրամը պարտավոր է հնգօրյա ժամկետում նրանց ընձեռնել կանոնադրության, կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ ծանոթանալու հնարավորություն: Հիմնադրամը պարտավոր է այդ անձանց պահանջով տրամադրել նրան կանոնադրության պատճենը: Վճարը, որը գանձվում է կանոնադրության պատճենը տրամադրելու համար, չի կարող դրա պատրաստման ծախսերից ավելի մեծ լինել: Իրավասու պետական մարմիններին նշված փաստաթղթերը տրամադրվում են անվճար:

3.5. Անօրինական գործունեություն ծավալելու համար Հիմնադրամը և նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

3.6. Հիմնադրամին օգնություն ցուցաբերող անձինք /այդ թվում՝ Հիմնադրամի հիմնադիրները/ իրավունքն ունեն.

ա/ մասնակցել հիմնադրամի գործունեության բոլոր ուղղություններին.

բ/ Հիմնադրամի կառավարման մարմինների կողմից, ինչպես նաև կնքված պայմանագրերով սահմանված պայմաններով Հիմնադրամի խնդիրներին ու նպատակներին համապատասխան ստանալ, խորհրդատվական, փորձագիտական, միջնորդական, գիտատեխնիկական և այլ օգնություն.

գ/ Հիմնադրամի միջոցով ստեղծել և զարգացնել երկկողմ և բազմակողմ կապեր.

դ/ Հիմնադրամի կողմից նրա իրավունքների, իրավական և տնտեսական հնարավորությունների շրջանակներում օգտվել սեփական շահերի պաշտպանությունից:

ե/ ցանկացած ժամանակ դադարեցնել իրենց մասնակցությունը Հիմնադրամի աշխատանքներին:

3.7. Հիմնադրամը վարում է իր գործունեությանն աջակցող անձանց ռեեստր:

3.8. Հիմնադրամին աջակցող անձինք պարտավոր են՝

ա/ Հիմնադրամի ծրագրերի և միջոցառումների իրականացման ժամանակ գործել Հիմնադրամի կանոնադրության պահանջներին խիստ համապատասխան,

բ/ չտարածել հիմնադրամի գործունեության մասին գաղտնի տեղեկություններ,

գ/ գերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս պատճառել Հիմնադրամին:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը /այսուհետ՝ խորհուրդ/,
- Հիմնադրամի գործադիր տնօրենը /այսուհետ՝ տնօրեն/:

4.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի խորհուրդը բաղկացած է 3

/երեք/ անդամներից և հիմնադրման պահին ձևավորվում է հիմնադիրների կողմից:
Հետագայում Խորհուրդը ձևավորվում է օրենքով սահմանված կարգով:

Հիմնադրամի Խորհուրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ հիմնադիրները:

Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է.

1. նրա գրավոր դիմումի հիման վրա.
2. նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում, Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.

Խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ:

4.3. Հիմնադրամի Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

- 1/ հիմնադրամի ռազմավարական ծրագրի /ծրագրերի/ հաստատումը.
- 2/ հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.
- 3/ հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.
- 4/ հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.
- 5/ հիմնադրամի հոգաբարձուների Խորհրդի նոր անդամների ընտրությունը և հիմնադրամի հոգաբարձուների Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.
- 6/ հոգաբարձուների Խորհրդի նախագահին, հիմնադրամի տնօրենի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.
- 7/ հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը.
- 8/ հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.
- 9/ տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.
- 10/ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.
- 11/ կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ հիմնադրամի տնօրենի հաշվետվությունների լսումը.
- 12/ իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.
- 13/ հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի /աուդիտորի/ ընտրությունը.
- 14/ հիմնադրամի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց աշխատանքի վարձատրության մասին որոշումների ընդունումը.

15/ օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

Հիմնադրամի խորհրդի նիստերում խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

Հիմնադրամի խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Հիմնադրամի խորհրդի որոշումներն ընդունում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:

Հիմնադրամի խորհրդի նախագահի, Հիմնադրամի տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Հիմնադրամի վերակազմակերպման, լուծարման, և կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու /նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատում/ որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Եթե Հիմնադրամի խորհրդի նիստում քննարկվում է Հիմնադրամի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի /ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր/ գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Հիմնադրամի խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

4.4. Հիմնադրամի խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հիմնադրամի խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Խորհրդի նախագահը՝

1/ կազմակերպում է Հիմնադրամի խորհրդի աշխատանքները:

2/ գումարում է Հիմնադրամի խորհրդի նիստերը և նախագահում դրանք:

3/ կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը:

Հիմնադրամի խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, Հիմնադրամի խորհրդի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

4.5. Հիմնադրամի խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ Հիմնադրամի խորհրդի նախագահի կողմից: Հիմնադրամի խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Հիմնադրամի խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ Հիմնադրամի խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Հիմնադրամի խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ:

Եթե նշված ժամկետում Հիմնադրամի խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստը կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

4.6. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է հիմնադրամի տնօրենը:

Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ հիմնադրամում կարող է ձևավորվել կառավարման 4 անդամից կազմված կոլեգիալ մարմին: Կոլեգիալ մարմնի անդամներին նշանակում և նրանց լիազորությունները դադարեցնում է հոգաբարձուների խորհուրդը, ընդ որում հիմնադրամի տնօրենը ի պաշտոնե ընդգրկվում է կոլեգիալ մարմնի կազմի մեջ և համարվում նրա ղեկավարը: Հիմնադրամի կոլեգիալ մարմինն իրականացնում է հոգաբարձուների խորհրդի կողմից իրեն վերապահված լիազորությունները: Հիմնադրամի կոլեգիալ մարմնի նիստերն անցկացվում են ոչ պակաս քան ամիսը մեկ անգամ: Նիստն իրավասու է, եթե նիստին մասնակցում են Հիմնադրամի կոլեգիալ մարմնի անդամների կեսից ավելին:

Հիմնադրամի տնօրենի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ Հիմնադրամի խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի:

Հիմնադրամի տնօրենը կազմակերպում է Հիմնադրամի խորհրդի որոշումների կատարումը:

Տնօրենն ընտրվում և պաշտոնից ազատվում է Հիմնադրամի խորհրդի կողմից: Տնօրենի պաշտոնում առաջին անգամ նշանակում կարող են կատարել նաև հիմնադիրները:

Հիմնադրամի տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է Հիմնադրամի խորհրդի նախագահը կամ Հիմնադրամի խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

Հիմնադրամի տնօրենը՝

- 1/ տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից,
- 2/ ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
- 3/ գործում է առանց լիազորագրի.
- 4/ լուսիս է լիազորագրեր.
- 5/ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
- 6/ բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային /այդ թվում՝ արտարժույթային/ և այլ հաշիվներ.
- 7/ Հիմնադրամի խորհրդի հաստատման է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական

ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

8/ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

9/ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում հիմնադրամի աշխատակիցներին.

10/ աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Հիմնադրամի տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Հիմնադրամի խորհրդի համաձայնությամբ:

Հիմնադրամի խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով, սույն կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

4.7. Հիմնադրամն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարում և ներկայացնում է հաշվապահական և վիճակագրական հաշվետվություն:

4.8. Հիմնադրամը պետական, սոցիալական, տնտեսական և հարկային քաղաքականության իրականացման նպատակով պատասխանատվություն է կրում փաստաթղթերի /կառավարչական, ֆինանսատնտեսական, աշխատակազմի մասին և այլ/ պահպանման համար: Հիմնադրամն օրենքով սահմանված կարգով ապահովում է անհրաժեշտ փաստաթղթերի հանձնումը պետական արխիվային մարմիններին:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

5.1. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

5.2. Հիմնադրամի ստեղծման պահին հիմնադրամի սկզբնական գույքի արժեքը կազմում է 35.000 /երեսունհինգ հազար/ դրամ, որը ներդրվել է հիմնադիրների կողմից, դրամական միջոցներով:

Հիմնադիրների կողմից Հիմնադրամի հանձնած գույքը Հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով:

5.3. Հիմնադրամի հիմնադիրների և այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց ներդրումները /նվիրաբերությունները, նվիրատվությունները և այլն/ կարող են կատարվել ինչպես դրամական և գույքային տեսքով /այդ թվում՝ սարքավորումներ, շենքեր, շինություններ, մտավոր սեփականության նկատմամբ իրավունքներ/, այնպես էլ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի տեսքով: Այս դեպքում կատարվում է ներդրվող

գույքի կամ օգտագործման իրավունքի դրամական գնահատում, որի մեծությունը նշվում է համապատասխան անձի /ներդրողի/ ու Հիմնադրամի միջև կնքված պայմանագրում:

5.4. Հիմնադրամի գույքի և միջոցների ձևավորման աղբյուր կարող են լինել՝

ա/ հիմնադիրների ներդրումները.

բ/ ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

գ/ դրամական մուտքերը պետական բյուջեից.

դ/ դրամաշնորհները.

ե/ հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

զ/ հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից /մշակութային, սպորտային, գվարձալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում/.

է/ օրենքով չարգելված այլ միջոցները:

5.5. Հիմնադրամի սեփականությունն է համարվում իր կողմից ստեղծված, ձեռքբերված կամ այլ քաղաքացիների, կազմակերպությունների կողմից հանձնված ունեցվածքը, ներառյալ՝ դրամական միջոցները, բաժնետոմսերը, այլ արժեթղթերը և մտավոր սեփականության նկատմամբ իրավունքները:

5.6. Հիմնադրամի ամբողջ ունեցվածքը, տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները համարվում են նրա սեփականությունը և չեն կարող որպես շահույթ հատկացվել Հիմնադրամի հիմնադիրներին: Հիմնադրամն իրականացնում է իր ունեցվածքի տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը միայն այդ գույքի նշանակությամբ համապատասխան և միայն Հիմնադրամի կանոնադրական խնդիրների և նպատակների իրականացման համար:

5.7. Պետական բյուջեի միջոցները կարող են ուղղվել Հիմնադրամի կողմից իրականացվող գործունեության աջակցմանը միայն մրցութային սկզբունքով և միայն այն դեպքում, եթե Հիմնադրամի գործունեության ծրագիրը սահմանված կարգով որակված է հանրօգուտ կամ բարեգործական: Պետական բյուջեից ստացված միջոցները չեն կարող ուղղվել Հիմնադրամի վարչակառավարչական ծախսերի իրականացմանը:

5.8. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ հիմնադիրների, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի: Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից որոշակի նպատակներով

Հիմնադրամին տրված նվիրաբերությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, միայն նվիրաբերողի համաձայնությամբ: Հանգանակությունից ստացված միջոցները կարող են ծախսվել միայն այն նպատակով, որը հայտարարվել է նախապես:

5.9. Հիմնադրամի ծախսերն են՝

ա/ կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը.

բ/ վարչակառավարչական ծախսերը:

Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը հիմնադրամի բյուջեում պետք է արտահայտված լինեն առանձին՝ ըստ նպատակների /ծրագրերի/ և օգտագործման եղանակների և /կամ/ սուբյեկտների, որոնց միջև բաշխվելու են միջոցները: Այդ ծախսերում ներառվում են նաև հիմնադրամի գույքի պահպանման, ավելացման և վերանորոգման, ինչպես նաև կապի, կոմունալ-կենցաղային, էլեկտրաէներգիայի, շինարարության ծախսերը:

Վարչակառավարչական ծախսերն իրենց մեջ ներառում են հիմնադրամի կառավարման, հիմնադրամի աշխատողների աշխատավարձի, ինչպես նաև հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերը և կազմում են Հիմնադրամի տարեկան ընդհանուր ծախսերի 20 /քսան/ տոկոսը:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն՝ հիմնադրամի միացման և միաձուլման ձևով:

Հիմնադրամների միաձուլում է համարվում նոր հիմնադրամի ստեղծումը՝ նրան երկու կամ ավելի միաձուլվող հիմնադրամների իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ և միաձուլվող հիմնադրամների դադարմամբ:

Հիմնադրամների միացում է համարվում մեկ կամ մի քանի հիմնադրամների գործունեության դադարումը՝ դրանց իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ այլ հիմնադրամի:

Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

Հիմնադրամի այլ վերակազմակերպումներ չեն թույլատրվում:

6.2. Լուծարումը Հիմնադրամի գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

6.3. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ չափազորգի առձանց դիմումով:

Հիմնադրամը կարող է լուծարվել, եթե՝

ա/ Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.

բ/ իր գործունեությամբ Հիմնադրամը չեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.

գ/ հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների փոփոխություն.

դ/ Հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.

ե/ Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

զ/ Հիմնադրամը ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

Հիմնադրամի լուծարումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

Հիմնադրամի լուծարմամբ պայմանավորված պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքերում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, Հիմնադրամի մնացած գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

6.4. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գործունեությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

18.12.2012թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՏԵՂ ՊՏԱԾ ՎՐԻՊԱԿԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Մ. Հովհաննիսյան/

N 10-Ա ՈՐՈՇՈՒՄ

Աշտարակ համայնքի ավագանու 30.08.2012թ. N 6-Ա որոշման մեջ տեղ գտած վրիպակը
վերացնելու նպատակով, ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի
պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ համայնքի ավագանու 2012թ. օգոստոսի 30-ի հմ.6-Ա որոշման 1-ին կետում
նշված 862-007 ծածկագրի 600քմ-ի փոխարեն կարդալ՝ 002-018 ծածկագիր, 620քմ:

Ա Վ Ա Գ Ա Ն Ր

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ -կողմ

ԱՐՄԵՆ ՂԱԼԱՉՅԱՆ -կողմ

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ -կողմ

ԱՐՄԱ ՔԱՄԱՆՅԱՆ -կողմ

ՍՏՅՈՂԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՊԵՏՅԱՆ -կողմ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՉՅԱՆ -կողմ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ

ՄՈՒՇԵԼ ՏԱՇՉՅԱՆ -կողմ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ

ԿԱՐՈ ԳԱՍՊԱՐՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

18.12.2012թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ն. Մարտիրոսյան/

N 11 -Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով քաղաքապետի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի առաջարկությունը,
դեկլարվելով՝ Տեղական ինքնակառավարման մասին՝ ՀՀ օրենքի 16/20, ՀՀ Քաղաքացիական
օրենսգրքի 463/4, ՀՀ հողային օրենսգրքի 48՝, 66 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համաձայնություն տալ ներքոհիշյալ իրավաբանական անձանց կառուցապատման
իրավունքով հողատարածքներ տրամադրելու.

- <Հայաստանի էլեկտրական ցանցեր> ՓԲԸ-ին – 1.13հա էներգետիկայի նշանակության
հողատարածք՝ <Աշտարակ 110/35/10կվ> ենթակայանի /ծածկագիր՝ 127-015/ և Աշտարակ
քաղաքը սպասող էներգետիկայի ենթակառուցվածքների /էլեկ.հենասյուններ, օդային և
ստորգետնյան մալուխային գծեր/ սպասարկման նպատակով, 99 տարի ժամկետով, տարեկան
566 000 ՀՀ դրամ վճարով:

2. Համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի Երևանյան փողոցի հմ. 99 հասցեում գտնվող,
Կարեն Բադալյանին և Հայկ Բեգլարյանին ընդհանուր բաժնային սեփականության
իրավունքով պատկանող հասարակական օբյեկտի /ԱԳԼՃԿ/ տարածքն ընդլայնելու
/ուղղակի վաճառքով/ 570քմ հողամասով:

3. Համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի <Արայի> տարածքում /ծածկագիր՝ 670-009 և
670-015/ գտնվող, Ժան Բադիյանին սեփականության իրավունքով պատկանող պտղատու
այգին ընդլայնելու /ուղղակի վաճառքով/ 100քմ հողամասով:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ

ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ

ԱՆՈՐԱՆԻԿ ՍՏՏՈՒՐՅԱՆ -կողմ

ԱՐԱՍ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ

ՍՏՅՈՂԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՅՅԱՆ -կողմ


ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ

ՍՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ

ԿԱՐՈ ԳԱՍՊԱՐՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

18.12.2012թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

N 12-Ա ՈՐՈՇՈՒՄ

Համայնքի քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառներում իրականացված աշխատանքներում տեղ գտած որոշակի անհամապատասխանություններն ու աննպատակահարմարությունները վերացնելու, նշված բնագավառներում հետագա իրականացվող աշխատանքները բարելավելու, դրանք օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու և խախտումները բացառելու, համայնքի ղեկավարին մասնագիտական խորհրդատվություն ասպեկտվելու, բնակչության իրազեկելու նպատակով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 28.10.1998թ. N660 <Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին> որոշման պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ստեղծել համայնքի քաղաքաշինական խորհուրդ, հետևյալ կազմով.

- Նշան Մարտիրոսյան - քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ, ճարտարապետ, անդամ,
- Աշոտ Ղափայան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ, անդամ
- Սոս Պետրոսյան - մարզպետարանի ճարտարապետաշինական բաժնի պետ, անդամ
- Մարգին Թովմասյան - քաղաքի նախկին ճարտարապետ, անդամ
- Գագիկ Գյուրջյան - քաղաքի նախկին ճարտարապետ, <Էրեբունի> թանգարանի տնօրեն, անդամ
- Ալեքսան Հովհաննիսյան - Աշտարակ քաղաքի բնակիչ, ճարտարագետ, անդամ
- Կարապետ Նավասարդյան - քաղաքի նախկին ճարտարապետ, անդամ
- Արամ Առաքելյան - քաղաքի նախկին ճարտարապետ, անդամ
- Կարեն Հովեյան - ճարտարապետ, անդամ
- Նվեր Սուրադյան - ԿՏԲ, ռեգիստր, անդամ

2. Կատարվող աշխատանքների մասին համայնքի բնակչության իրազեկումն ասպեկտվել ԶԼՍ-ներով /այդ թվում՝ էլեկտրոնային միջոցներով/, հասարակական քննարկումներով:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ - կողմ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՅԱՆ - կողմ
ՎԱՀԱԳՆ ՄՎՐՏՅԱՆ - կողմ
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ - կողմ
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒԹՅԱՆ - կողմ
ԱՐԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ - կողմ
ՍՏԵՂՈՒԱ ՔԱՍՅԱՆ - կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ - կողմ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՅԱՆ - կողմ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ - կողմ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ - կողմ
ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ - կողմ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ - կողմ
ԿԱՐՈ ԳԱՍՊԱՐՅԱՆ - կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

18.12.2012թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՍԱՑՈՂ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇԵՆՔԻ ԿԻՍԱՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ ՈՐՈՇԱԿԻ ՏԱՐԱԾՔԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

N 13 -Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի
պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող քաղաքապետարանի կիսանկուղային
հարկից որոշակի տարածք փոխանակել նույն շենքի առաջին հարկում գտնվող
Ն. Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 41.6քմ տարածքի
հետ՝ փոխանակված տարածքը անվարձահատույց և անժամկետ աշխատանքի և
սոց.հարցերի նախարարությանը տրամադրելու նպատակով՝ ինտեգրված
սոցիալական ծառայություններ իրականացնելու համար:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒԹՅԱՆ -կողմ
ԱՐԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ
ՍՅՈՂԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՉՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ
ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ
ԿԱՐՈ ԳԱՄՊԱԹՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

18.12.2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

N 14-Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 04.12.2012թ. N01/16/6385 հանձնարարականի համաձայն ՀՀ Արագածոտնի մարզպետի 05.12.2012թ. N 01/14.2/4081-12 գրությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1.2 կետի և <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 14/20 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակի քաղաքային համայնքի տարածքում, Աբովյան փողոցի հմ. 28/1 հասցեում գտնվող պատմության և մշակույթի հուշարձան <Կարմրավոր> եկեղեցու սպասարկման համար անհրաժեշտ պետական սեփականություն հանդիսացող, հատուկ պահպանվող տարածքների 0.097հա հողամասն անհատույց սեփականության իրավուքով հատկացնել Հայաստանյազ Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ

ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ -կողմ

ԱՐԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ

ՍՏՅՈՂԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՉՅԱՆ -կողմ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ - դեմ

ՍՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ

ԿԱՐՈ ԳԱՄՂԱՐՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  **Ա. ԱՆՏՈՆՅԱՆ**

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

18.12.2012թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող Գ. Եղիազարյան/

N 15-Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով 24.02.2011թ ՀՀ Կառավարության N164 որոշումը, համայնքի
ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1, Ստեղծել քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով
7 հոգուց, հետևյալ կազմով՝

- Գևորգ Եղիազարյան
- Աիդա Ազիզյան
- Արարատ Եսայան
- Գայանե Դանիելյան
- Լուսինե Արամյան
- Անահիտ Գևորգյան
- Լիլիթ Խեչանյան:

ԿԱՐԵԼ ՀԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇՏԱՐԱԿԻ ԿԱԶՄԸ
9.12.2012



2. Հանձնաժողովի նախագահ նշանակել Գևորգ Եղիազարյանին, քարտուղար՝ Աիդա
Ազիզյանին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ
ԱՆՂՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ -կողմ
ԱՐՄՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ
ՍՏՅՈՂԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ
ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ
ԿԱՐՈ ԳԱՍՊԱՐՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ *[Signature]* Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

18.12.2012թ.

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Հ. Հայրապետյան/

N 16 -Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով վերլուծության արդյունքները, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/20 և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համայնքի ավագանու 2005 թվականի դեկտեմբերի 28-ի N 3-Ա/7 որոշման մեջ կատարել փոփոխություն և ավտոտնակներն օգտագործման տրամադրելու համար ամսական 1քմ-ի համար սահմանված 1000 ՀՀ դրամի փոխարեն վարձավճարը սահմանել 1քմ-ի համար ամսական 400 /չորս հարյուր/ դրամ:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ
ՏԻՓԻՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ -կողմ
ԱՐԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ
ՍՅՈՊԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՅԱՆ -կողմ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ
ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ
ԿԱՐՈ ԳԱՄՊԱՐՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

18.12.2012թ.

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի
ԹԻՎ 2-Ն ԵՎ 5-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Գ. Դատումյան/



N 17-Ա ՈՐՈՇՈՒՄ



Հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 28.11.2012թ. N 04/21/3982-12 գրությունը, ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 20-ի <Համայնքային բյուջեի 9-ը ամիսների կատարողականի մասին> N 2-Ն որոշման նախաբանում, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի փոխարեն կարդալ՝ <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի պահանջներով:
2. Համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 20-ի <Աշտարակի քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին> N 5-Ն որոշման նախաբանում, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 26, 28, 32/5-ի փոխարեն կարդալ՝ <<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 28-րդ> այնուհետև ինչպես տեքստում:

Ա Վ Ա Գ Ա Ն ՈՒ

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ 
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՅԱՆ -կողմ 
ՎԱԿԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ 
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ 
ԱՆՔՐԱՆԻԿ ԾԱՏՈՒԹՅԱՆ -կողմ
ԱՐԱՍ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ
ՍՏՅՈՂԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ 
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ -կողմ 
ԱՐՄԵՆԱԿ ՄԱՐԳԱՅԱՆ -կողմ 
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ 
ՍՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ
ԿԱՐՈ ԳԱՍՊԱՐՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

20.12.2012թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 18 -Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով համայնքի ավագանու կանոնակարգի 5-րդ գլխի պահանջներով /23-րդ
ենթակետ/, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Մտեղծել մշտական հանձնաժողովներ և հաստատել նրանց կազմը՝

1. Գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով.

- | | |
|----------------------|---------------------|
| 1. Մարիբեկ Օվոյան | 6. Կարեն Շահազիզյան |
| 2. Մուշեղ Տաշյան | 7. Նորիկ Անդրեասյան |
| 3. Թովմաս Շահվերդյան | 8. Տիգրան Գալստյան |
| 4. Արթուր Նահապետյան | 9. Վահագն Մկրտչյան |
| 5. Արամ Քամայան | 10. Արսեն Ղալաչյան |

2. Սոցիալական ապահովության և բնության պահպանության հարցերի մշտական
հանձնաժողով.

- | | |
|-------------------|----------------------|
| 1. Ստյոպա Քասյան | 4. Կարեն Շահազիզյան |
| 2. Արամ Քամայան | 5. Արմենակ Մարգարյան |
| 3. Արսեն Ղալաչյան | |

3. Իրավական հարցերի մշտական հանձնաժողով.

- | |
|-----------------------|
| 1. Անդրանիկ Ծատուրյան |
| 2. Նորիկ Անդրեասյան |
| 3. Ստյոպա Քասյան |

4. Ցինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.

- | | |
|----------------------|---------------------|
| 1. Արմենակ Մարգարյան | 5. Ստյոպա Քասյան |
| 2. Կարո Գասպարյան | 6. Արամ Քամայան |
| 3. Աշոտ Հունանյան | 7. Կարեն Շահազիզյան |
| 4. Մարիբեկ Օվոյան | |

5. Ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով.

- | | |
|----------------------|--------------------|
| 1. Արթուր Նահապետյան | 6. Ստյոպա Քասյան |
| 2. Տիգրան Գալստյան | 7. Աշոտ Հունանյան |
| 3. Կարեն Շահազիզյան | 8. Արսեն Ղալաչյան |
| 4. Մարիբեկ Օվոյան | 9. Վահագն Մկրտչյան |
| 5. Արամ Քամայան | |

Ա Վ Ա Գ Ա Ն ՈՒ

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ

ԱՐՄԵՆ ԱՆԼԱՅՅԱՆ -կողմ

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ -կողմ

ԱՐԱՄ ՔԱՄԱՅԱՆ -կողմ

ՍՏՅՈՊԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ -կողմ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

20.12.2012թ.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ ԲՈՒՆԱԴԱՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ
ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻՑ ՄԱՀԱՊԱՏԺԻ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԸ
ՀԱՎԵՐԺԱՅՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆ-ԿՈԹՈՂ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Կ. Շահազիզյան/

N 19-Ա ՈՐՈՇՈՒՄ

Խորհրդային կարգերի ժամանակաշրջանում բռնադատման հետևանքով մահապատժի դատապարտված անձանց հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթող կառուցելու նպատակով, ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 1998թ. հոկտեմբերի 28-ի N 660 որոշման պահանջով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ստեղծել նախաձեռնող խումբ, հետևյալ կազմով՝

- | | |
|---------------------|--------------------------|
| - Կարեն Շահազիզյան | - Հարություն Բաղդասարյան |
| - Տիգրան Գալստյան | - Գևորգ Եղիազարյան |
| - Արթուր Նահապետյան | - Նշան Մարտիրոսյան |
| - Արամ Քամալյան | - Նորիկ Անդրեասյան |
| - Ստյոպա Քասյան | - Պետրոս Զոհրաբյան: |
| - Արսեն Ղալաչյան | |

2. Նախաձեռնող խմբին՝

- ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն հուշարձան-կոթողի տեղի ընտրության, նախագծային փաստաթղթերի պատվիրման և աշխատանքների ֆինանսավորման հարցերի վերաբերյալ:

3. Արված առաջարկությունները ներակայացնել քաղաքաշինական խորհրդի քննարկմանը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ-կողմ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ-կողմ

ԱՐՄԵՆ ՂԱԼԱՉՅԱՆ-կողմ

ԱՆՎԱՆԻԿ ԾԱՏՈՒԲՅԱՆ-կողմ

ԱՐԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ

ՍՏՅՈՊԱ ՔԱՍՅԱՆ-կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ-կողմ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ-կողմ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ

ՄԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ- կողմ

ՍՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ -կողմ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ-կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

20.12.2012թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/

N 20-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի պահանջներով,
համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Աշտարակի քաղաքապետարանի աշխատակազմի նոր կառուցվածքը՝
Քաղաքապետ

Հայեցողական պաշտոններ – 3

Աշխատակազմ – 8

Կառուցվածքային ստորաբաժանումներ

- Կրթության, մշակույթի, սպորտի և սոցիալական հարցերի բաժին
- Ֆինանսատնտեսագիտական բաժին
- Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին
- Ներքին աուդիտի բաժին

Առանձնացված ստորաբաժանումներ

- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Աշտարակի տարածքային բաժին

Պայմանագրային աշխատողներ - 15

ԱՎԱԳԱՆԻ՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ

ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒԹՅԱՆ -կողմ

ԱՐԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ

ՍՅՈՊԱ ՔԱՍՅԱՆ -կողմ

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ -կողմ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ -կողմ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ -կողմ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  Ա.ԱՆՏՈՆՅԱՆ

20.12.2012թ.

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿԱՐԶԱՏՐՈՒԹՅԱՆ ԶԱԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/

N 21-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 31.05.2012թ-ի N692-Ն որոշումը, համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Քաղաքապետի աշխատավարձը սահմանել ամսական 265 000 /երկու հարյուր վաթսուհինգ հազար/ ՀՀ դրամ:

